ԼՈՒՐ

# գաղտնի՞ չէ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում առաջիկայում ընտրություններ են լինելու: Մասնավորապես, հունիսի 28-ին պետք է ընտրվի ԳԱԱ նոր նախագահ: Ռադիկ Մարտիրոսյանի պաշտոնավարման ժամկետն արդեն լրացել է, սակայն չի բացառվում, որ հենց նա էլ վերընտրվի այդ պաշտոնում: ԳԱԱ-ում դժգոհություններ կան, թե թափուր պաշտոնի մրցույթ որեւէ տեղ չի հայտարարվել, եւ այդ ընտրություններից մի քանի օր առաջ Ակադեմիայում քչերն են տեղյակ դրանց մասին: Խնդրի առնչությամբ պաշտոնական մեկնաբանություն ստանալ երեկ մեզ չհաջողվեց, իսկ ԳԱԱ պաշտոնական կայքից առաջիկա ընտրությունների մասին հնարավոր եղավ գտնել միայն հետեւյալը. հունիսի 28-ին կհրավիրվի ԳԱԱ ընդհանուր ժողով, որի օրակարգում կլինի 2 հարց՝ Ակադեմիայի նախագահի ընտրություն, ինչպես նաեւ փոխնախագահի ու ակադեմիկոս-քարտուղարի ընտրություններ: Իսկ մրցույթ չհայտարարվելու վերաբերյալ ԳԱԱ առավել տեղյակ անդամները հայտարարեցին, որ դրա կարիքը չկա, քանի որ ԳԱԱ նախագահի պաշտոնում կարող են առաջադրվել միայն ակադեմիկոսներն ու թղթակից անդամները, որոնք էլ հենց ընտրում են նախագահին: Այնպես որ, ընտրությունների մասին չիմանալու եւ այդ պատճառով առաջադրվելու հնարավորություն չունենալու խնդիր չկա: Երեկ մեզ վստահեցրին, որ բոլոր ակադեմիկոսներն ու թղթակից անդամները ոչ միայն տեղյակ են սպասվող ընտրությունների մասին, այլ նաեւ հաստատել կամ չեն հաստատել իրենց մասնակցությունն Ընդհանուր ժողովին: